

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԵՂԻՇԷԻ ՊՍՏՄՈՒԹԻԻՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ըստ Անձնացեաց օրինակի Ծանօթութիւններով և հայ-ուսերէն բառագրքով ի լոյս ընծայեց ուսուցիչ Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց Խ. Յովհաննիսեանց, Մոսկա, 1892 թ. Ա—Զ եր. յառաջարան, 9—182 եր. բնագիր, 183—242 եր. Ծանօթութիւններ, 243—391 եր. բառագիրք:

Յառաջարանի մէջ հեղինակը նկատում է, թէ մինչև այժմ ոչ մինը հալոց (դասական) հեղինակներից ծանօթութիւններով, բառագրքով ճշտացրած լատարացրած չէ աշակերտների գործածութեան համար: Այս զգալի պակասորդը լրացնելու դիտաւորութեամբ, առաջին (?) փորձը, թէև մեծ երկիւղածութեամբ՝ կատարում ենք չնայնարիկ Նդիշէի պատմութեան վրայ, որ կարդացում է ոչ միայն Լազարեան ճեմարանում, այլ և հալոց միւս ուսումնարաններում ևս:

Բոլորովին համաձայնելով այ. հեղինակի վերոյիշեալ նկատողութեան, թէ դասարանական գործածութեան լատարացրած դասական հեղինակներ գրեթէ չունինք՝ մենք տրամադիր էինք մեծ ուրախութեամբ ողջունել Նդիշէի այս հրատարակութիւնը, որ մի փորձ է լրում տալու

վիշեալ պակասութեան. սակայն փոքր ի շատէ ծանօթանալով այդ աշխատութեան հանգամանքներին՝ պէտք է ցաւելով լատարարենք, որ այս առաջին փորձը լաջողած չէ:

Բուն բնագիրը այ. հեղինակն ամենին չէ մշակել դասարանական գործածութեան համար. նա վերցրել անփոփոխ և ամբողջ արտատպել է Անձնացեաց ծանօթ օրինակը, որի մի քանի տպագրութիւնները արդէն կան և տարածածած են ուսումնարաններում: Պր. հեղինակը բնագրի ստորոտներում անլցրել է վննետիկեան հրատարակութեան տարբեր ընթերցածները և շատ անգամ ալպիսի նկատողութիւններ. «այստեղ պակաս է քեզ», «աստուածալին բառը պակաս է», «պակաս է այստեղ» «չաջողեցաւ տէրութիւնն ուրա», «գլորէր պակաս է ալտեղ» և այլն: Բնագրի այս

միակ «մշակումը» մենք մասամբ ան-
նպատակալարմար ենք գտնում դա-
սարանական հրատարակութեան
համար և մասամբ սխալ մտածողու-
թեան արդիւնք։ Այն աշակերտը, որ
գրաբար լեզուն պիտի դեռ սովորի,
Նդիշէն դասարանում կարգալու՜ ան-
շուշտ չէ կարող հետաքրքրել Նդի-
շէի ընդգրի ընթերցածներով։ սա
նորա թէ լեզուի գիտութեան և թէ
դարդացման շափից բարձր է։ Ըն-
թերցածները նշանակութիւն ունին
մատենագիրն ուսումնասիրո-
ղին համար։ և ալս դէպքում շատ
անբաւական է՝ բերել միայն Վենետ-
կեան հրատարակութեան ընթերց-
ածները, մինչդեռ ոչ միայն Նդիշէի
բազմաթիւ ձեռագիրներն, ալ նոյն
խակ ալ և ալ տպագրութիւնները
մեծաքանակ ընթերցածներ և մա-
տակարարում, երբեմն շատ հետա-
քրքրական։ Խակ «պատեղ պակաս
է...» նկատողութիւնները վարանման
մէջ են ձգում ընթերցողին, մանա-
ւանդ աշակերտին։ Յիրաւի, եթէ պ.
հեղինակը համոզած է, թէ «գելուր
և տապալէր երկդիմի մտօք» խօս-
քում (երես 21) պակաս է գլորէր
բառը՝ ինչո՞ւ չէ գրել ալ բառը
ընդգրի մէջ—գելուր, գլորէր և
տապալէր երկդիմի մտօք»։ Խակ եթէ
խղճել է և չէ վստահել Անձևացեաց
օրինակն ուղղագրել ուրիշ օրինակ-
ների ընթերցածներով՝ անբացա-
տրելի կը մնալ պակաս է բառի
գործածութիւնը։ Անձևացեաց օրի-
նակն չիրաւի համեմատաբար լաւա-
գոյն ընթերցածներ ունի։ բայց սա
չէ նշանակում, թէ նա ամեն բանում
ամենալաւն և անթերին է։ բազմա-

թիւ ուրիշ օրինակների և ձեռագիր-
ների միաբան վկայութիւնը իրա-
ւունք պէտք է ստան հրատարակողին՝
ընդգրի մէջ մտցնել փոփոխութիւն-
ներ ընդդէմ Անձևացեաց օրինակին,
ի հարկէ՝ սորա համար հարկաւոր է
Նդիշէի լեզուի, ոճի հմուտ ուսում-
նասիրութիւն և բազմաթիւ օրինակ-
ների ձգրիտ բաղդատութիւն, որ,
ինչպէս երևում է, պ. հեղինակը չէ
արել։

Սորա փոխանակ պ. հեղինակը
զանց է արել ընդգրի քերականա-
կան և ոճաբանական մշակումը, որ
անհրաժեշտ և ամենակարևորն է դա-
սարանական գործածութեան լատ-
կացած դասական հեղինակի համար։
Գրաբարը դադարել է կենդանի լե-
զու լինելուց։ մենք պէտք ունինք
նրան սովորել հեղինակների ընթեր-
ցանութեամբ, բառարանների և քե-
րականութեան օժանդակութեամբ։
Բայց չալտի է, որ հեղինակներից
շատերը—և սոցա մէջ Նդիշէն գլխա-
ւոր տեղերից մէկն է բռնում—ունին
գործածած ալիպիսի նախադասու-
թիւններ, պարբերութիւններ, ալի-
պիսի դարձածքներ, ալիպիսի քե-
րականական ձևեր, որոնք ոչ մի բա-
ռարան և քերականութիւն չեն կա-
րող բացատրել։ Դեռ աւելին ասենք.
նոքա չաճախ գործ են ածում ալի-
պիսի ձևեր, որ գրաբարի քերական-
ութեան և ընդհանուր քերականա-
կան տեսակէտից ապօրինի, նոյն խակ
սխալ են։ Ահա ալիպիսի մի դասա-
կան հեղինակ տրւում է աշակերտի.
ձեռքը, որ կարգաւ, հասկանալ, ըն-
տելանալ գրաբարին և օրինակ վեր-
ցնէ նրանից։ Բայց աշակերտը կար-

դուժ է՝ և չէ հասկանում շատ տեղեր. նա լածախ գալթակողում է, հանդիպելով քերականական խորթութիւններին, որոնց բացատրութիւնը չէ գտնում իւր սովորած քերականութեան մէջ. Շատ անգամ ուսուցիչը դժգոհ կը մնալ աշակերտից՝ եթէ սա իւրացնելով Նդիշէի կամ ուրիշ մատենագրի մի լատինի նախադասութիւնը՝ հետեւեալ լինի նորան իւր շարադրութեան մէջ. 28 որ դ աս ա ր ա ն ի համար պատրաստած մատենագրի մշակման մէջ առաջին տեղը պէտք է ընէր ալպիսի հատաձնների լուսաբանութիւնը— մեկնել մութ խօսքը, բացատրել բառի լատուկ, անսովոր գործածութիւնը ալպիսի տեղում, քերականական խորթութիւնները պարզել, խորթութիւններն ու սխալները նշանակել. Թէ որչափ շատ են ալպիսի բացատրութիւնների պէտք ունեցող հատաձններ՝ երևում է հետագայ օրինակներից, որ քաղել ենք Նդիշէի առաջին երկու եղանակներից միայն (որ ամբողջի մի քառորդն էլ չէ կադմում)։

«Ոչ լանձին կարտութիւն երկշաւոր առատ դիտութեանդ լրման».
«առ թնչ արդեօք հրամայեսցես (1) քան եթէ հրամայիցիս լաւագունացն».
«բազում ինչ է սրբութիւն՝ ստորար լինել անօրութեան».
«ս ոք կամեսցի՝ ընդունի իբրև զնահատակ առաքինի» (երես 10).
«ընկալաք զհրաման պատիրանի լաննախանձ քոյոց բարուց բնութեանդ» (12).
«հրովարտակ եհաս լախարհն Հալոց, ի Վրաց և Վաղուանից» և ի Լիւնաց...» (15).
«դունդ կաղմէր ի Հալոց մեծաց

զազատ և զազատորդի» (երես 16).
«բալց սակալն թէպէտ և նոքա... լուծ դուարձութեամբ խնդալին՝ արտաքին տեսիլն կարի ողորմ էր» (եր. 25, նոյնն և եր. 26).
«պիւթալը (') որ ինչ ի մտին էր՝ զի վարդազակի կատարեսցի» (եր. 20).
«ուստի ալս ամենալն դանձ ելանէ՝ զիւրդ չէն կալցէ ալխարհն Հալաւտանեաց» (եր. 27).
«իբրև տեսին՝ թէ ալու ամենալն չը կարացաք ձանձրացուցանել» (եր. 27 և չաջ).
«ոչ միալն ձեռին չը զննի, ալ և ոչ ընդ միտս ուրուք հարկանի, ոչ միալն ընդ մարմնակա. նացս՝ ալ և ընդ անմարմին հրեշտակացն» (եր. 32).
«ի վերմէ հեղգութեանն» (եր. 34).
«դիւրատար ի լականջս ամենեցուն» (եր. 35).
«մահ ի լանձն էառ» (եր. 40).
«զոր և ձեր ոմն քաջ վիմատոնոցն ասաց».
«լանցաւորք լանցանացն ամօթալից».
«ըմպել ըմպէ դան» (եր. 36).
«եթէ առ մարդիկ ալս պաշտի, ի ձեռն թագաւորական վիճակին խրատուն խնամտանել իւրում իշխանութեանն» (38).
«1) «ոչ ոմնք թողացուցից ի մեծամեծ հարածոցն» (41).
«լաւաջ քան զգործ պատերազմին հասանել (') զգալ իսկ առ նա մեծի շնորհակալութեան համարէր».
«ոչ մի ինչ

1) Այս նախադասութիւնը սխալ է թարգմանել և պ. Ղուկասեան (եր. 51). պ. Յովհաննիսեանի բառարանովն էլ անկարելի է ուղիղ թարգմանել. Սա նշանակում է. «եթէ մարդոց մէջ սովորական է, որ դատաւորը թագաւորից ստացած արտօնութեամբ պատժի միջոցով կառավարում է իւր իշխանութիւնը».

լալացանէ ամենեկին ինչ ոչ վիշեաց».
«եթէ ոչ վաղիւ ընդ առաւօտն...
դիւրաքանչիւր ծոճն ճմառ ոչ կրկնեա-
լիք» (43)։ Սոքա միայն ան միջո-
թիւններն են, որ մեր կարծիքով
աշակերտը իւր ուժով չէ կարող բա-
ցատրել, տարակուս չը կալ, որ աշա-
կերտը շատ աւելի կը գտնէ աշակերտի
տեղեր վերադիշեալ էջերում։ Իսկ ահա
օրինակներ քերականական խորթ ու-
թիւններն և սխալներն, որոնք աշա-
կերտին պէտք է անշուշտ զալթակ-
դեցնեն. «զամենայն մրկածին օդովքդ
անցանից եմք» (11)։ «աչբ մի
Անատոլ անուս... առաքեաց առ նա»
«իբր ոք զի ի հոգւր բորբոքեալ չա-
ւելլով բազում նիւթս փալտից»
(13)։ «լորժամ արգելուս և փա-
կես զամենեկան՝ կատարին
խորհուրդք կամաց քոց... և տիրես
դու երկրին Քուշանաց և Յոնք իսկ
ոչ ելան են ընդ քո իշխանու-
թիւնդ» (15 և չաջ)։ «հանեալ
ի բաց դռնութիւնն՝ ընդ ուն էր
զվճիւ մահու» (18)։ «զմնչ հատու-
ցուք մեք ատուածոցն, որ ոչ ոք
կարաց ելանել ընդդէմ մեր» (23 և
չաջ)։ «աչար չամենալն ի վե-
րայն»։ «աշխարհագիր առնելով ամե-
նալն երկրն հալոց» (26)։ վասն
թղի միտ ուտելու ի ծառոյն՝ Աս-
տուած դմահ արար» (28)։ «դտիեզե-
րական իշխանութիւնդ (յ) դոր ա-
ւանդեալ է դմա Աստուծոյ» (31)։
«Աստուծոյ լալտնի է անդործք
մարդկան» (32)։ «չար արժան է
ասել թագաւորին» (հր. 33) և
նմա անեղծ Աստուած չմարթի ասել»
(34)։ «և իբր և ոչ եթէ չօտար զօ-
րութենէ չարի ինչ ընկալաւ ուրուք

զպատիժս պատուանին» (հր. 34)¹⁾։
«ալապէս խառնեալ են տարերքս
ալտ» (35)։ «երեկցաւ ալոց բազ-
մաց (յ) աւելի քան զինդ հարիւ-
րոցն» (39)։ «ոչ փոխանակեմք ընդ
Յիսուսի Քրիստոսի, որ չիք ալլ
Աստուած բաց ի նմանէ» (40)։ և
«տամ անցուցանել ընդ անճոճա-
պար՝ տեղիս, որ և բազումք ի ձեռն
վերթալն սատակեցին» (46)։ «ամե-
նայն (յ) որ ինչ և ասես՝ վաղիւ-
ղակի կատարի» (41)։ «մեք նորա
մահամբն չաւիտեան կան մահ-
ւանէն ապրեացուք» (40)։ «զոճիդ
կաղմէին, որ զնոսա չկոթակ արա-
ցեն» (47)։ «պալս ամենայն որ ասա-
ցաք» (5)։

Այս օրինակները դեռ պէտք է
բազմապատկենք չորս կամ հինգ ան-
գամ, որպէս զի ունենանք նմանօրի-
նակ տեղերի քանակութիւնն ամե-
րոջ ընդգրում. և տոյնորից բազ-
մապատկենք դոնէ չորս անգամ՝ որ-
պէս զի ստանանք իսկական քանա-
կութիւնն ան տեղերի, որոնք աշա-
կերտ ի համար բացատրելու կարիք
կալ։ Հեղինակի առաջին գործը
պէտք է լինէր այս անհրաժեշտ լու-
սաբանութիւնները տալ, առանց ո-
րոնց գիրքն, իբրև դասարանական
ձեռնարկ, կորցնում է իւր նշանա-
կութիւնը։ Նրանի թէ նա աչքի ա-
ռաջ ունեցած և հետեւած լինէր Հ.
Թոռնեանի աշխատասիրած «Հատըն-
տիր ընթերցածք ի մատենագրու-

¹⁾ Նրեի հարկաւոր է բառերի
տեղափոխութեամբ կարդալ. «և ոչ
եթէ իբրև չօտար ինչ զօրութենէ
չարի ուրուք ընկալաւ...»։

թեանց նախնեաց» (Վիեննա, 1866 և 1891) գեղեցիկ ձեռնարկին, որ իւր բազմաթիւ բնագրի լուսարանութիւններով լիրաւի օգտակար ծառայութիւն է մատուցանում աշակերտին: Առանց այս կարեւոր մշակման գրքի բնագիրը մնում է մի լոկ արտատպութիւն, առանց որ և է չարմարութիւն աւելցնելու դասարանական գործածութեան համար:

Բայց իբրև լոկ արտատպութիւն է՝ բնագիրը շատ չաճախ մեղանշում է ուղղագրութեան դէմ: Նթէ ուղղագրութեան սխալները դատապարտելի են որ և է գրածքի մէջ՝ աննւիրելի են դառնում դասարանական ձեռնարկում: Ամեն մի բառ, ամեն մի խօսք, որ աշակերտի աչքի տակից պիտի անցնի՝ պէտք է նորան առաջնորդէ դէպի դիտութիւն, դէպի ճշմարիտը, դէպի ուղիղը, որ և է սխալ, որ կարող է դիւրաւ տպաւորւել աշակերտի tabula rasa ուղեղում՝ շատ դժւար կը լինի անուշտե հանել նորա գլխից. ուրեմն մանկավարժական տեսակէտից՝ չանցանք է ուղղագրական սխալներով խճողած մի գիրք տալ աշակերտի ձեռքը: Խակ մեր քննած գիրքը այս կողմից առատ նիւթ է մատակարարում ամեն տեսակի սխալ ուղղագրութեան — տպագրական վրիպակներին, սխալ (աւելորդ, պակաս, անճիշտ) կէտադրութեան և անդրադէտ տողադարձներին: Ահա մի քանի օրինակ, որ վերցնում ենք դարձեալ գրքի 9—50 երեսներից (առաջին երկու եղանակներից): Տառասխալներ (բացի նոցանից, որոնք պ. հեղինակը ցուց է տւել իւր գրքի վերջում). կամակա-

րութեան (10) սկըսցուք, կըուէր (12—ուրիշ հաղարատը անգամներ, նաև որտեղ պէտք է՝ ալդը գիրը չէ գործածւած), մոգք (մոգքն—14), խնոի էին (16), իդենիդ (86), մննք (36), ի կամ (ի կամա—37), զկողմանցս (կողմանցս—39), չալսր ամննալնի (չալսր ամննալնի վեբալ—40), նոնպէս և 53 երեսում՝ մտացող մոռացութիւն—անմոռացութիւն:

Սխալ կէտադրութիւն. «Նթէ հարկանեն (') չղգան». «զապականել մարմնդ գէշաքարչ արարեալ (') իբրև զաղիր մեռելոտի ի բաց ընկեցեալ» (14). «լանդիման լինէին փութով կատարել զճրամանն». (16՝ փութով լանդիման լինէին, թէ փութով կատարէին զճրամանն — չալնի չէ). «վարէին լօտարութիւն (յ) չաղնական պատուը անարգեալ», «ընդունէին զամնալն չարչարանսն վառն մնծի լուսոյն (յ) որ առաջն պատրաստեալն կալ» (25. որ չարաքերականով երկրորդական նախադասութիւնը միշտ առանց ստորակէտի). «զովն զմա՛» և պարսաւն զկեանս, անարգեն զժնունդս մարդոյ, և զովն զանորդութիւն» (29. Բնչ պատճառ կալ, որ մի տեղում բութ լինի,—զմա՛ իսկ միւս տեղում տտրակէտ — մարդոյ). «նթէ զմա՛ (') չար ատուածն արար» (34). «չականէ, լանւանէ» (42, և միևնույն երեսում դարձեալ չականէ լանւանէ, առանց ստորակէտի, որ առաջինից լաւ է). «լորժամ ի հալոց ալրուձի ի դուռն երթալ» (') ի ձեռն պատաւորի զօրագլխի ուրուք, ալր ընդ առաջ լղէր» (43—բութի պակաս և ստորակէտի աւելորդ լինելու պատ-

ճառով միտքն ալլալուամ է)։ (մի, ի մարդկանէ) (45. — պէտք էր՝ մի ոք ոք ի մարդկանէ)։

Անգրագէտ տողադարձ. մարտնչէր (12), եկեալ (14), լրջմտութեամբ, խորհրդովք, արարեալ (16), ձալն-դուրք (17), ծննդեան (33), բարերարութեանց (40), որդեաց (42), հալեց եալք, հարկաւ (44), հնարից, խողեալ (47) և ալն և ալն։

Բնագրի մասին վերջացնում ենք մեր խօսքը, դանց առնելով կանգ առնել այս կէտին վերաջ, թէ որչափ անլաջող ընտրութիւն է եղիշէի պատմութիւնը՝ իբրեւ դասարանական ձեռնարկ՝ դրաբար սովորելու համար. նոյնպէս թէ որչափ աննպատակաւարմար է ամբողջ գրածքը դնել աշակերտի առաջ, որի համար շատ տեղ անհասկանալի պիտի մնալ, շատ տեղ անհետաքրքրական է, շատ բան կրկնւած և ձանձրացուցիչ, տեղ տեղ էլ ոչ պատշաճաւոր (գոնէ փոքրերի համար)։

Ծանօթութիւնների մասին շատ բան չունինք ասելու Դոցանից մեծագոյն մասը տեղեկութիւններ են գաւառների, աղղերի և ուրիշ լատով անունների մասին. փոքր մասը՝ պատմական բացատրութիւններ, մի-երկու հատ էլ լեզուագիտական նկատողութիւններ, Այս ծանօթութիւններն, ինչպէս ինքը հեղինակն էլ լատեում է՝ քաղած են Ինճիճեանի, Ալիշանի, Պատկանեանի և ուրիշ գիտնականների զանազան աշխատութիւններից, ինչպէս նաև մեր հին մատենագիրներից (գլխաւորապէս Փարպեցուց և Խորենացուց)։ Այս ծանօթութիւնների մէջ տեղ-

տեղ պատահում են անճշտութիւններ, սխալներ, հնացած կարծիքներ. ալսպէս, օրինակ, հեղինակն Արշակունեաց սկիզբը դնում է 149 թ. ն.թ., (երես 183. — գոնէ պէտք էր մէջ բերել Պատկանեանի կարծիքն ալսնիւթի վերաբերութեամբ, Mater. дик. арм. слов., вып., II, ерես 49—64). Նաւասարդ ամիսը, նորա կարծիքով, «սկսւելով լուսիսի 11-ից, սկսում է մինչև օգոստոսի 10-ը» (եր. 195. — նա մոռանում է, որ հալոց հին տոմարը շարժական լինելով՝ նաւասարդը կարող էր սկսւել տարւալ 365 օրից ամեն մէկումն էլ, լուսիսին, լունիսին, մալիսին և ալն, մինչև մեծ շրջանը բոլորելով կրկին գար հասնէր լուս սկսած տեղը). նա ասում է, թէ Ատրպատականի հալերը վարդանի լաղթութիւններից ոգեւորւելով՝ ոտքի են ելնում (Պարսկատանում) և սկսում են քանդել ատրուշանները (եր. 202. — մինչդեռ Եղիշէի խօսքերը շատ պարզ ցուց են տալիս, թէ աղ բանն անողները տեղացի հալերը չէին, ալ Հաւատանից Ատրպատական լարձակւած խմբեր). Սեր (աւելի լաւ է՝ Սերա) անունը բացատրելու համար բաւական է համարում մէջ բերել Նէմանի թարգմանութիւնը, որով Սեր = Syria = Ատորիք (եր. 203. — մինչդեռ Խորենացու աշխարհագրութեան մէջ Սիւսիա անունը (լուսնաբն Սէոս) և ուրիշ շատ բառեր ցուց են տալիս, թէ Սեր կամ Սերա՝ քաղաք է եղել Չինաստանի արեւելեան կողմը — Պատկ. Арх. Георг. եր. 83—84). նա շարունակում է դեռ Խորենացու հետ մեղ հաւատացնել, թէ Փառա-

խոտ անունը ծագել է փառոխից, Սղկունիք՝ Սլաքից, Դիմաքսեան նշանակում է Դիմակիսեան և ալլն (207, 214, 212)։ Ո ստանիկ բառի նշանակութեան մասին շատ մուշ և անճիշտ հասկացողութիւն ունի (209)։ Սեպուհ բառի նշանակութիւնը «նա չը գիտէ» (209)։—բաց արժէր գիտնալ ն. Մառի տւած սրամիտ և գոհացուցիչ բացատրութիւնն ալս բառի)։ Նորա համար՝ «գաշանց թղթի ծագումն մինչև ալժմ կասկածելի է» (204—Կ. Վ. Շահնազարեան, Գուտշմիտ, Ա. Տաշեան, Բ. Սարգիսեան և ալլն բոլորովին կարող էին փարատել ալս հնազարեան կասկածը, որոնք արդէն հերքել են ալլ թղթի վաւերականութիւնն և ապացուցել, թէ նա մի կեղծիք է Կիրիկեան ժամանակներից)։ Սև ալլն։

Մանթութիւնների մասին էլ պէտք է նկատենք, որ հեղինակը զանց է արել լուսաբանել նոցա մէջ ընագրի բովանդակութիւնը, մատենագրի տրամաբանելու եղանակը, նորա մտքերի լաջորդութիւնը, ոճը և ալլն, որոնք լեզուէն ուսումնասիրելու համար—որին իսկապէս նւիրած է ալս աշխատութիւնը—աւելի կարևոր են, քան ալս աշխարհագրական և պատմական, երբեմն նոյն իսկ անխորդ ծանօթութիւնները, որոնք աւելի հետաքրքրական են Սղիշէի գիրքն իբրև պատմութիւն ուսումնասիրողին, Վերցրէք Սղիշէի ընծակաւանը («Եսպոմ չեւթն գլուխս») մինչև վերջը), քրիստոնեաների լանդիմանութիւնն ուրացեալ հալ նախարարներին («Վարդապետք

էիք առաքելական քարոզութեանցն»), հալ հոգևորականների դիմադրութեան որոշմունքը («Եսպոմ ժամանակի ուրեցեան»), Վեոնդի դիմադրութեան ազդեցութիւնը հալերի վերալ («Սև լետ ալսր տագնապի») և ալլն և ալլն—սոքա եթէ չը բացատրեն՝ աշակերտին անհասկանալի կը մնալ նոցա նեւ քիւն նշանակութիւնն և ոլժը, երբեմն նաև արտաքին նշանակութիւնը։ Իսկ երբ բացատրին՝ աշակերտը, բացի ալս որ նորա աչքերը կրակ կամ արտասուք կցալտեն՝ կըմբռնէ, թէ ինչ է ոճը, ինչպէս իմաստները մի քանի երեսներ շարունակ ներքին կապերով շաղկապած են միմեանց հետ, ինչ է կանոնաւոր տրամաբանութիւնը, ինչպէս լեզուն, ճարտար գրչի տակ, կարող է կենդանանալ, համոզել, ոգևորել, սքանչացնել, Բնագրի ալս տեսակ բացատրութիւնը (քաճօրք), որ ամենազարգացուցիչ կրթութիւններից մէկն է՝ անտես է արած դասարանական գործածութեան չափացրած ալս հրատարակութեան մէջ։ Նոյնպէս զանց է արել հեղինակը ցոյց տալ ալս աղբիւրները, որոնցից մատենագիրն հատածներ է փոխ առնում իւր պատմութեան մէջ՝ շատ անգամ Գեռ չենք խօսում քննական ծանօթութիւնների մասին, որոնց նպատակը պէտք է լինէր բացատրել մատենագրի աղաւաղած ընթերցածները, համեմատել նորա աւանդածը ուրիշ աղբիւրների հետ, որոշել իրականն երևակաականից, պատմականը հետտրականից և ալլն, որոնք պակաս զարգացուցիչ չեն հասկաւոր աշակերտի համար և նա-

խաղաղութիւնը եւն ճիշդ, անկասկած, անհաշիւ ապագայութեամբ, աշխուրջ և բազմակողմանի վերաբերութեան դէպքի մատենագրական երևութենքը և առհասարակ դէպքի կեանքը:

Բայց արտաքին աշխարհի ծանօթութիւնները համեմատաբար աւելի լաւ են, կամ ճիշդն ասելով՝ նազ թերի են, քան գրքի առաջին և երրորդ մասերը:

Բառագիրքը կազմում է հեղինակի գլխավոր աշխատութիւնը և գրքի ամենահետաքրքրական մասը: Հեղինակն ակտիւ ամփոփել է Նիդերլանդի պատմութեան մէջ պատահած բառերը, բացատրել է նոցա նշանակութիւնը ռուսերէն լեզուով, շատ բառերի մօտ գրել է արմատները՝ սանսկրիտ, պահլավիկ, պարսիկ և լոյն լեզուներով, շատ բառերի տակ էլ մէջ է բերել հատկանշներ Նիդերլանդի պատմութիւնից, երբեմն նաև Խորենացուց (և իրանից շարադրած), որոնք և թարգմանել է ռուսերէն: Նիդերլանդի ալիս քառարանը գոհացուցիչ լինէր ծրագրի և մշակման կողմից՝ աշխարհի մեծ և շնորհակալութեան արժանի գործ և մեր լեզւին ու գրականութեան պիտանի երկ կը լինէր՝ որ մոռացնէր կտար գրքի միւս թերութիւնները: Դժբախտաբար նա ամենաթերին, ամենապակասաւորն է գրքի միւս մասերից, ոչ միայն բազմաթիւ բառերի կիսատ ու սխալ բացատրութեամբ, այլ և ընդհանուր ուղղութեան, ծրագրի կողմից, Նախ և առաջ մեզ համար անհասկանալի է գրաբար բառերը ռուսերէն թարգմանելը, և ոչ աշխարհաբար: Նիդերլանդի իւր աշխատութիւնը ձեռ-

նարկել է մեր ուսումնարանների պիտոյքը լրացնելու համար (առաջաբան, Ա) նա պէտք է գիտնար, որ մեր ուսումնարանների աշակերտներին աշխարհաբար աւելի մատչելի է, քան ռուսերէնը, ալիս քան նոքա աշխարհաբար ռուսերէնից լաւ են հասկանում, ուրեմն ինքն ըստ ինքեան պարզ է, որ անձանթը պէտք էր բացատրել ամենաժանօթ լեզուով և ոչ աշխարհի լեզուով, որ երբեմն նոյնչափ անձանթ է նոցա: Աշխարհաբար բացատրելը մի ուրիշ անհամեմատ օգուտ էլ ունի, որ աշակերտը գիտակցօրէն կը ճանաչէ գրաբարի և աշխարհաբարի տարբերութիւնը բառերի և դարձածքների մէջ, նա կը հասկանալ բառերի կեանքի ընթացքը, աստիճանաբար փոփոխութիւնը դարերի ընթացքում նշանակութեան և ձևի կողմից. նորա համար կը պարզուի բառի ներկայ, գրաբարից տարբեր նշանակութեան զաղտնիքը, նա գիտակցաբար կը հասկանալ բառը նորա ամբողջ, հին և նոր նշանակութեամբ: Աւելորդ է ասել, թէ սրչափ օգտակար և ցանկալի է աշխարհի գիտակցական, դարացողական ըմբռնողութիւնը լեզուի համար, որից պէտք է գրկել ալ բառարանը գործածողը: Բայց ենթադրենք մի բոլոր, թէ հեղինակը աչքի առաջ է ունեցել աշխարհի աշակերտներ, որոնք աշխարհաբար չը գիտեն—ալիս ենթադրութեամբ նորա գիրքը մեր ուսումնարանների շեմքից ալիս են ներս մտնել կարող է—ենթադրենք, որ նա գիրքը կազմել է օտարազգիների համար (համալսարանների, գուցէ և լազարեան

ճեմարանի ուսանողներին համար)՝ բաց ալս դէպքում ինչ խորհուրդ ունին ծանօթութիւնները աշխարհաբար լեզուով, չէ որ զոքա անմատչելի կը մնան ալսպիսի ընթերցողներին։

Նորնշափի գրեթէ անհասկանալի է մեզ համար՝ շատ հալերէն բառերի համեմատութիւնը արեւելեան և լուսարէն լեզուների հետ։ Սթէ հնդկ-նակը մտադրել է կազմել ստուգաբանական բառարան—դարձեալ կրկնում ենք՝ բարձրագոյն ուսումնարանների ուսանողներին համար— ինչ խորհուրդ կալ հալերէն բառերի մի մասը բացատրել, իբրև համացեղ վերոլիշեալ օտար լեզուներին, իսկ մեծագոյն մասը, որ նորնշափ չարժնչութիւն ունի՝ անտես անել։ Միթէ հարկաւոր չէր բացատրել նաև՝ աղ, ալպն, ալս, ալր, աշկարալ, բաստեռն, ըմպեմ, թագաւոր, հմուտ, հզօր, հող, զամբար, մարտ, մհհեան, նահատակ, նկարեմ, ննջեմ, շաբաթ, պաշարեմ, պատկանդարան, պատգամ, դամիկ, ուրբի, սամուր, վատախտարակ, տղալ, քահանայ, քուր, քորեպիսկոպոս, քսակ, քրտիկար և ուրիշ բազմաթիւ բառեր։ Միթէ հարկաւոր չէր ստուգաբանութեան մէջ առաջին տեղը տալ՝ հալերէն բառերի կազմութեան, որով թէ նոցա նախնական նշանակութիւնը աշկարալ կերեւէր, և թէ ուսանողը լեզուի կազմութեան մասին ալսպիսի լալն գաղափար, ընդարձակ հալեացք կը ստանար, որ չեն կարող տալ հարկաւոր բառերի զուգահրութիւնը սանկրիտ և ալլ արմատների հետ։ իսկ ալսպէս պատահական կերպով մի քանի բառ համեմատելը, միւս-

ները թողնելը՝ ոչ մի նպատակի չի հասցնէ։

Այն հատածները Նդիշից, որ հնդկնակը բառարանում զետեղել և թարգմանել է՝ նորից մեր զարմանքն ու տարակուսանքն են շարժում։ Նոցա ամենամեծ մասը ալնքան պարզ է թէ շարադրութեան և թէ իմաստի կողմից՝ որ պէտք չունի բացատրելու։ իսկ փոքր մասը, որ ալս կամ ալն կերպով մտնէ՝ ալնքան հեռաւոր (երբեմն օրալ) թարգմանութեամբ է բացատրւած, որ սովորողին աւելի կը շփոթէ։ քան նորա տարակուսը կը վարատէ։ Հնդկնակը կարծես նպատակ է ունեցել, որ աշակերտը զեղեցիկ ուսուերէն ոճով ¹⁾ թարգմանէ ալն հատածները, քան ճիշտ հասկանալ նոցա նշանակութիւնը։ Բաւականանաք մի քանի օրինակներով։ «Սթէ չէր մեր աճապարեալ և ի փախուտ դարձեալ՝ միում ի մէնջ ոչ տալին ապրել»։ (Աճապարեմ)։ «Զի մի ալլադենքն եկեալ բառնացեն զոսկերս զոցա»։ (Ալլաւնդեն)։ «Որէնք աստուածալին կացեն թագաւոր ի վերալ ամնանին (1) և ի նմին օրինաց ընկալցին լանցաւորք զպատիժս դատապարտութեան»։ «Աստուածալին»։ «Եւ հրաման սաստիւ զոնապանացն աւնէին, եթէ ոք չարենլս առ մեզ գալցէ՝ թողցեն, իսկ չարեւելից չարեմուտս անանց լիցի ճանապարհ»։ (Արենլք)։ Սոքա ոչ մի

¹⁾ Մեր նպատակից դուրս լինելով՝ մենք չենք խօսի, թէ սրբան զեղեցիկ ուսուերէն ոճով են ալն թարգմանութիւնները։

բացատրութեան և թարգմանութեան պէտք չունին, որովհետեւ պարզ և հասկանալի են: Իսկ հետեւալ օրինակներում թարգմանութիւններն աւելի անպարզ և սխալ են՝ որ աշակերտին միայն կը մոտրեցնեն, «Քանզի ոչ եթէ ակնկալութիւն ինչ էր երանելացն ըստ մասնաւոր կենաց, ալ իմաստութեամբ հնարս խնդրէին» լինել փոխանակ ամենալն աշխարհի շինութեան» (Ակնկալութիւն. — Ибо блаженные не то что-бы уповали на земную жизнь, но благо; разумно искали лишь способы к обновлению всей страны. Ետեւորումը բոլորովին սխալ է թարգմանած), «Եւ իբրեւ լանձն էառ. (Վասակ) զամենալն ինչ երթալ զկնի կամաց նորա» (Ա. և Ն. ու. — И когда Васакъ добился того, что всему далъ желан. ный ему ходъ — ծալի է ծալի սխալ), «Իբրեւ լամենալն կողմանց եկն փակեցաւ անկ արգելան նոցա»... (Ա. ր. 4 եւ 1 ան — Когда они были заключены въ непроницаемую темницу — բնադրի փոխարեւութիւնը վերցած է բառացի և սխալ թարգմանած), «Աւետարան առաքեաց ընդ ամենալն արտուշանս աշխարհին իւրոր» (Ա. և ե տ ա ռ — онъ возвѣстилъ о побѣдѣ) во всѣхъ вапицахъ своего государства — անճիշտ թարգմանութիւն), Այս օրինակները մինք վերցրինք միայն Ա գրից. նոյն երևութիւնը պատահում են և ամբողջ բառարանում. ալնալիս որ կարող ենք ասել, թէ թարգմանած հատածնեւրի տասից իննը ավելորդ կամ սխալ

են, և հազիւ մի տասներորդն օգտակար:

Այս ընդհանուր նկատողութիւններից լեռն էրը գալիս ենք առանձին բառերի մշակութեան քննութեան՝ վարանման մէջ ենք ընկնում: Քննել բառարանն ալս տեսակէտից՝ կը նշանակէր նորա ծաւալով մի գրածք շարադրել. իսկ չքննել անկարելի է: Այսքանը միայն ասենք, թէ շատ քիչ են ալն բառերը, որոնց թարգմանութիւնը զոհացուցիչ լինի. իսկ կիսատ և սխալ բացատրած բառեր. բառերի ալնալիսի նշանակութիւններ, որ նոքա չունին կիլիշէի մէջ, բառեր և ոճեր, որ պակասում են բառարանում, իսկ բնագրում կան, և ընդհակառակն, որ բնագրում չկան և բառարանում լոյս են ընկել. բառերի նշանակութիւնների խառն ի խառն դասակարութիւն, առանց արամբարանկան հետեւողութեան նոցա մէջ, տառաթխալներ և ալն և ալն — որչափ կամենաք կը գտնէք ալս բառարանում: Հարկաւորներից մինք մի քանի նմուշներ միայն կը բերենք:

Հետեւալ բառերում պակաս են փակագծերի մէջ ցուց տած նշանակութիւնները՝ անձն (ինքն), գեղում (չէզոքական նշանակութիւնը), իմանամ (կրաւորականը), խրատ (պատիժ), համար (հաշիւ — отчетъ), հրաման (կարգադրութիւն), պաշտն (գործածել, սովորութիւն ունենալ), տուն (կալածք):

Հետեւալ բառերում սխալ են փակագծած նշանակութիւնները. երկեամ (двухголичный), ըստ (սեւ ա կ ա ն ո վ նշանակում է համե-

մատ), հրամանատար (повелитель — համեմատեցէք՝ հազարապետ, որ նոյն նշանակութիւնն ունի), ձողգ. (растопка, расплавливание металлов), ճննճեր (смажь), ծն անդր (сохрани Боже):

Հետեւեալ բառերով փակագծւած նշանակութիւնները աշխարհաբարինն են, իսկ Նղիշէի մէջ չը կան. ապրիմ (жить), կնքաւոր (отецъ крестный), կնքել (крестить), բարակ (тонкий, нѣжный), սեպական (собственный):

Հետեւեալ բառերը և ոճերը պակասում են բառարանում, թէպէտ Նղիշէի մէջ կան. անարի (ոչ-արեաց ցեղից), անդերձապետ, ապարանութիւն, ապատ, առանձինն, ապարասանել, առաւել, ընդդէմ (մակբալ), հռչակ, անձամբ անձին առնել, ընդ գրով արկանել, ի վերին երեսս, փալտ ընկենու:

Հետեւեալ բառերը ընդգրկում չը կան (ալլ Վենետիկի հրատարակութեան ընթերցածներէի մէջ, որոնք սակաւն հեղինակը չէ գետեղել իւր բնագրում). ապարթանել, պարմակել:

Հետեւեալ բառերն իրանց ձևերով անսովոր և սխալ են, որ մուծել է հեղինակն իւր բառարանում առանց գոնէ ցոյց տալու, թէ որտեղ են նոքա գործածւած Նղիշէի մէջ. ապրեմ, բերկրեմ, երես, արդիւն, ընպեմ, օդի, (ալծիք ամենեին չը կա):

Իսկ բառի մի քանի նշանակութիւններն ընդհանրապէս դասաւորւած են խառն ի խառն. ոչ մի նշանով ցոյց չէ տրւած նոցա աստիճանաբար ընդլայնումը, մասնաւոր կամ ընդհանուր առումը, բուն կամ փո-

խաբերական գործածութիւնը. Վեր-ցրէք, օրինակ, Առաջատ — брачное ложе, завѣса, покрывало, парусъ, флагъ. Ինչո՞ւ ոչ завѣса, парусъ, завѣса для отдѣленія ложа повобрачныхъ, брачное ложе. Զուգ, անական, — равный, парный, подобный, со-вокупный. Ինչո՞ւ ոչ՝ Զուգ, դրական, пара, Զուգ, ան., парный, соотвѣтственный. Դառնութիւն — желчь, горечь. горестъ, ѣдкость, жесткость. Ինչո՞ւ ոչ горестъ, горечь, жестокость. Մարտակից — союзникъ, врагъ, неприѣтель. Ինչո՞ւ ոչ совокупно борющійся. Կենդանանամ — возстать (?) ожить, воскреснуть. Ինչո՞ւ ոչ ожить. Եւ ալլն և ալլն:

Չենք կարող աստեղ ցոյց չը տալ և բառարանի մէջ ապրդած տառա-սխալները (նոյն իսկ բառագլուխներում). Գետնախշտնեալ, հաչեմ (—հա-ջեմ), մողեզ, դանդաղեմ (փոխանակ՝ դանդաղեմ). իսկ բառերի շարքում՝ անխաբ, գեշաքարչ, առանձին, մատակերամ (մատաղեբամ), վիշեցէք (վիշիցէք), մնաս (երկու անգամ, փոխանակ՝ մնաս), են (էին), ասպնջա-կանութիւն (ասպնջականութեան) և ալլն:

Ամիսփետով մեր հարեանցի և կարճառօտ նկատողութիւնները՝ մինք ցաւով սրտի պէտք է խոստովանինք, որ այս գիրքը, չը նախելով հեղինակի բարի ցանկութեան և գործ դրած մի քանի տարւալ աշխատութեան՝ խոշոր պակասութիւններ ունենալով թէ ընդհանուր ուղղութեան և թէ մանրամասնութիւններէ մէջ՝ չէ կարող հասնել հեղինակի առաջադրած նպատակին, ալսինքն ձևո-